

## ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՊԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսից մեզ հաղորդում են, որ սուլթանը իրադէ է հրատարակել, որով Վեհ. Իզմիրլեանին արձակում է տաճկաց հպատակութիւնից և այդ մասին արդէն հաղորդուած է ոռու կառավարութեան. այդ հանգամանքից դատելով՝ կարելի է այս օրերս սպասել կաթողիկոսական հաստատութեան լուրին Պ. Բուրգից:

Բայց այն՝ ինչ որ նշանակալից է և հետաքրքրական, այդ՝ Իզմիրլեանի փոխարէն, որ արդէն ըստ օրինաց արձակուած է համարում պատրիարքական պաշտօնից, պատրիարքական նոր տեղապահի ընտրութիւնն է:

Յայտնի է, որ տաճկահայ պատգամաւորները Պօլսից ճանապարհ ընկնելով դէպի Կովկաս՝ Սև ծովի վերայ լողացող շոգենաւի վերայ որոշեցին Իզմիրլեան սրբազանի հետ կաթողիկոսական երկրորդ թեկնածու ընտրել Զմիւռնիայի առաջնորդ Նդիշէ եպս. Դուրեանին և հասնելով Էջմիածին ոչ մի արգելքի առաջ կանգ չառան իրանց այդ որոշումը ի կատար ածելու և ոչ միայն Դուրեան սրբազանին երկրորդ ընտրեցին, այլ և Թիֆլիզի շատ և շատ շրջաններում յայտարարեցին, որ իրանց վերջնական որոշումն է, երկու ընտրեալներից երբ մէկը հաստատուի կաթողիկոս, միւսը անշուշտ պատրիարք լինի Պօլիս, որպէս երկու անգուգական անձեր—մէկը հոս կաթողիկոս, միւսը հոն պատրիարք:

Իրաւունք ունէր ուրեմն ազգը սպասել, որ Ամեն. Իզմիրլեանի պատրիարքութիւնից դուրս գալուց յետ՝ Տաճկահայերը առանց դանդաղելու իրանց ամբողջական քուէները պիտի կենդրոնացնէին ս. Դուրեանի անուան վերայ և վերջնիս հռչակէին Կ. Պօլսի պատրիարք:

Բայց ինչ արեց Տաճկահայ ժողովուրդը:

Կ. Պօլսի ազգային ժողովը, Ամեն. Իզմիրլեանի հեռանալուց անմիջապէս յետոյ նիստ գումարելով՝ պատրիարքական տեղապահ է ընտրում Բրուսայի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս

Արշարունուն, որ, ի դէպ ասել, խիստ արժանաւոր մի եկեղեցական է, և իրանց բունն ցոյցերով կաթողիկոսական ամենաարժանաւոր թեկնածու հռչակած Դուրեան սրբազանին զլացան նոյն իսկ քաղաքավարութեան համար առաջարկել հրաժարական ներկայացնել ընտրական ժողովին, այլ որ և է ողորմելի «Յ քուէով» սևացրին նորան Համազգային ժողովում, արժանի չհամարելով նոյն իսկ պատրիարքութեան «տեղապահի» պաշտօնի համար:

Շատ տխուր խոհեր է տրամադրում տաճկահայոց այս վարձունքը՝ անհասարակ և այս հանգամանքը միանգամ ևս ընդգծում է «հոսնոս» բառի նշանակութիւնը, որ այնպէս սաղում է մեր տաճկահայ եղբայրներին:

### ՄԱՅՐ ԱՔՈՌԻ ՉԱՐԱԲԱՏՏ ԶԵՄԱՐԱՆ

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի պատմութիւնը հայկական կեանքի դժբաղտ իրականութեան ամենահարազատ պատկերն է ներկայացնում: Կարծէք Էջմիածնի մթնոլորտը ամեն տարի մի դժբաղտ պատահար է ստեղծում հայկական այդ հաստատութեան զլխին, որ երբեմն վերջանում է ուսանողների մի խմբի հեռացուելով, իսկ երբեմն և աւելի յաճախ՝ տեսուչների և միշտ աւելի սրտացաւ տեսուչների արձակուելով:

Դժուար է ցոյց տալ մի որոշ ժամանակաշրջան, երբ խաղաղ և կանոնաւոր կեանքը ճեմարանում չխանգարուէր մի որևէ դաւադրութեամբ, նիւթուած այս կամ այն գործչի դէմ, որ անմըտութիւն էր ունեցել փոքր ինչ աւելի եռանդ ցոյց տալ իւր գործունէութեան մէջ և կամ կամակատար չլինել վանքի մէջ ոյժ ներկայացնող անհատների քմահաճոյքին:

Այս երևոյթը այնքան խիստ պարբերականութիւն է ստացել, որ զարմանալի կլինէր մեզ համար, եթէ ճեմարանի այժմեան կեանքը այլ պատկեր ներկայացնէր մեզ, քան ինչ որ սովոր ենք տեսնել:

Ուստի և մենք ամենևին չզարմացանք, երբ մեզ պատմեցին, որ ներկայումս զարմանալի հալածանք է սկսուել այժմեան տեսուչ Մինաս Բերբերեանի դէմ մինչև այն աստիճան, որ անգամ դիտաւորութիւն կայ կառավարութեան միջոցով խուկարկել և գտնել այն անձին, որ «Հայորդի» ստորագրութեամբ մի բրոշուրով հերքել է ճեմարանի մասին կատարած քննութեան հետևանքները և ո՛ր գիտէ գուցէ և երազել տպագրող տպարանին էլ դատի թարկել...